գրելով հայերի ընդհանուր կացությունը, Դավրիժեցին կոնկրետացնում է իր ասելիքը Փահրան գյուղի և նրա տանուտեր Նուրիջանի օրինակով, որպեսզի ակնառու լինի պատկերը: Եվ ահա այդ կոնկրետությունը դրսևորվում է իբրև զրույց (տե՛ս էջ 159–160):

Այդպիսի դրսևորումներով զրույցներ առկա են նաև «Վասն շարժման մեծի քաղաքին Թարվիզու» վերնագրով ԼԵ գլխում: Այս դեպքում կոնկրետ օրինակներով Դավրիժեցին մանրամասնում է երկրաշարժի պատճառած արհավիրքները: Մեջբերենք գետնի տակն անցած հովվի ու նրա հոտի մասին զրույցը, որը ժանրի ցայտուն օրինակ է: Կարճառոտությունն ու նպատակասլաց պատումը նպաստում են առավել ցնցող տպավորություն գործելուն, ինչն այս պարագային ևս զրույցի ներժանրային օրինաչափություններից է. «Այլ և ասացին ոմանք թէ խաշնարած ոմն հովիւ, որոյ առաջի հոտք ոչխարաց արածէին ի վայրի ուրէմն, և յաւուր միում ընդ լինիլ շարժին՝ իսկոյն պատառեցաւ թանձրութիւն երկրի, և բացաւ խորութիւն անդնդոց, յորում սուզեալ ընկղմեցաւ հովիւն և մասն ինչ յոչխարացն, և կենդանոյն կլեալք յերկրէ, և ոչ ևս երևեցան» (էջ 373–374):

Իսկ ահա «Յաղագս շարժին, որ եղև ի Վան քաղաքին, և իւրում շրջակա երկրին» վերնագրով ԼԷ գլխում երկրաշարժի փաստը կոնկրետացվում է պատահած հրաշքի մասին զրույցով, երբ երկու մանուկներ փրկվում են արհավիրքից (տե՛ս էջ 378–379):

Եվ վերջապես, առանձին խումբ են կազմում ժանրի այն երևումները, որոնք միևնույն ժամանակ նաև «Գիրք պատմութեանցի» հերթական ամբողջական գլուխն են: Այդպիսի դեպքերում պատմագրության մեջ զրույցը ավարտուն ու ամբողջական ժանրային դրսևորումներից բացի, կատարում է նաև կառուցվածքաբանական գործառույթներ: Զրույցներ են «Պատմութիւն և պատճառ աւերման աշխարհին վրաց եւ մահուան Լաւասափ թագաւորին նոցա, որ եղև ձեռամբ առաջին Շահաբասին» վերնա-